



ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ  
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ  
HELSINKI CITIZENS' ASSEMBLY  
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի  
Հանրապետություն, Վանաձոր  
Տիգրան Մեծի պողոտա 59  
59 Tigran Metsi st.  
Vanadzor, 2001, Republic of Armenia  
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68  
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36  
E-mail: [hcav@hcav.am](mailto:hcav@hcav.am)  
Ե/2014- 24.06/230  
24.06.2014 թ.

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ

Վ. Շահինյանին

Հարգելի պարոն Շահինյան,

2014 հունիսի 19-ին իր իրավունքների պաշտպանության համար ՀՔԱ Վանաձորի գրասենյակ է դիմել ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Աղայան Փ. 86/1 11 հասցեի բնակչուհի Սվետլանա Սուրիկի Պապինյանը: Կազմակերպությանն ուղղված դիմումում քաղաքացին հայտնել է, որ 2013 թվականի դեկտեմբերի 29-ին ՀՀ Ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի Վանաձոր քաղաքի Տարոնի քննչական բաժանմունք խարդախության վերաբերյալ հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել:

Ըստ քաղաքացու դիմումի վարույթն իրականացնող մարմինը նախաքննության ընթացքում թույլ է տվել խախտումներ: Մասնավորապես, քաղաքացին հայտնում է, որ ՀՀ Ոստիկանության ՔԳՎ Լոռու մարզի քննչական բաժնի Վանաձոր քաղաքի Տարոնի քննչական բաժանմունքի ավագ քննիչ Ս. Թադևոսյանը 2014 թվականի մարտի 17-ին Վանաձոր քաղաքի Համբարձումյան 10/25 հասցեի դիմաց գտնվող ավտոտնակում կատարել է անվահեծերի զննություն, որի ժամանակ, ըստ քաղաքացու դիմումի, ընթերականեր ներկա չեն եղել և առարկաների զննության մասին արձանագրության մեջ նշված քաղաքացիները (Արզամ Սուրենի Գեղամյանը և Պայծառ Կարենի Հարությունյանը) իրականում գոյություն չունեն և նրանց փոխարեն ստորագրել է քննիչը:

Տվյալ մտահոգությունը պարզելու համար քաղաքացու փաստաբանի կողմից հարցում է կատարվել ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ԵՎ ՎԻՋԱՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ԲԱԶՈՒՄԻ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Ճ Ը Ը ք. Վանաձոր, Ռուսթավի 1

☎ (0322) 5-05-78  
ֆաքս (0322) 5-05-78

Թիվ 22 / 59-- 778

«31» 05 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ  
ՓԱՍՏԱԲԱՆ

Ա. ԱՐԱՍՅԱՆԻՆ

Ձեռ 30.05.2014թ.-ի գրություն

Չայտնում հնք որ . քաղ. Արզամ Առդենի Գեղամյանի / ծնվ. 17.09.1992թ./ և Պայծառ  
Կարենի Հարությունյանի/ ծնվ. 21.11.1991թ. / հաշվառման մասին համակարգչի  
պետեզիստի պահոցում տվյալներ չկան:

ՀՀՌ ԱԿԿ Քաղումի անձնագրային խմբի

առաջատար մասնագետի ժ/պ,

ՔՀՕ 2-րդ դասի խորհրդակցան

Ա. ԱՐԱՍՅԱՆԻՆ



